

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՐՄՏԱՆԻ ՎԿԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՑԱՆ

Հոդվածում վեր է հանվում հայ գրականության դասական հեղինակ Հակոբ Մնձուրու (Հակոբ Տեմուրճյան) կյանքի պոլսյան շրջանը: Եղեռնի հետևանքով Հակոբ Մնձուրին ստիպված եղավ իր ողջ կյանքն ապրել հարազատ ծննդավայր Արմտանից հեռու, քանի որ աքսորվել ու սպանդի էին ենթարկվել ինչպես հարազատ ծննդավայր Արմտան գյուղի բնակչությունը, այնպես էլ իր ողջ գերդաստանը, այդ թվում և չորս երեխաները: Կ. Պոլսի «Մեհեան» և «Ոստան» հանդեսներում տպագրված մի քանի պատմվածքների հեղինակ Մնձուրին ամենամագործ աշխատանքներին զուգահեռ մխրճվում է գրական-ստեղծագործական ոլորտ՝ դառնալով կարոտի գրականության և սփյուռքահայ գրականության սկզբնավորողներից մեկը: Նրա հիմնական թեման գյուղն էր ու գյուղացին, հայրենի բնաշխարհն ու կենդանական աշխարհը, որ ընդհանրաբանալով խտացնում էին աշխատանքի ու արարման խորին խորհուրդը ի հակակշիռ սպանդի ու ավերման: Մնձուրու գրեթե բոլոր պատմվածքներում ներկա է ինքը՝ մերթ որպես մասնակից ծավալվող դեպքերի, մերթ որպես ականատես, մերթ էլ որպես իր կերտած հերոսների և ընթերցողի հետ զրուցակից: Եվ այդ ամենը հետևանք այն բանի, որ նա գրում էր այլևս չգոյ մարդկանց ու եզերքի մասին, որոնք անընդհատ գալիս էին, լցնում նրա հիշողությունները, որոնցից նա «պարպվում», «խաղաղվում» էր գրելու միջոցով՝ նպատակ ունենալով յուրովի վերակենդանացնել նրանց բոլորին, շարունակել նրանց կյանքը:

Մնձուրու պատմվածքները, գեղարվեստական արժեքներից զատ, նաև երկրագիտություն են, ազգագրություն, ժողովրդական կենցաղի, բարքերի ու սովորույթների փաստագրում, բայց ամենից առաջ այն հայկական եղեռնի վավերագրումն է, նրա վկայությունը, մի գրականություն, որի ընթերցման ժամանակ ընթերցողի մեջ առաջանում է այն հարցը, թե ո՞ր է այդ մարդիկ, և ի՞նչ պատճառով նրանք չկան:

Մնձուրու պատմվածքների մեծ մասը թեև հազիվ 2-3 էջից են բաղկացած, սակայն նրա չորս գրքերը, մամուլում տպագրած վիպակներն ու գրություններն իրենց ամբողջության մեջ մեկ միասնական վեպ են կազմում, որ կարելի է անվանել Արևմտահայաստանի Արմտան գյուղի ասք՝ ուղղված ներկա ու գալիք սերունդներին՝ ի հավերժացումն հայրենի հողի ու բոլոր նահատակների:

Բանալի բառեր – «Կապույտ լույս», Արմտան, գյուղական թեմատիկա, «Նազար» թատերախաղ, Մնձուրի, Մեծ եղեռն

1914-ի աշնանը Հակոբ Մնձուրին մեկնում է Պոլիս՝ վիրահատելու նշագեղձերը: Վիրահատությունից զատ՝ կար շատ կարևոր ևս մեկ գոր-

ծոն: «Մեհեան» հանդեսում Յակոբ Տեմիրճեան ստորագրությամբ արդեն տպագրվել էին նրա երկու գործերը («Գիւղի գիշերներ», 1914, թիվ 3 և «Գիշերին մէջ», 1914, թիվ 6): Անհրաժեշտ էր գրական այդ մուտքը ամրակայել, ով գիտէ, գուցէ նոր գործեր էր իր հետ տանում՝ չիմանալով, որ պարբերականի օգոստոսյան համարը այլևս չէր տպագրվելու: Գուցէ և գնում էր «*ինքզինք ճանաչել տալու*» պոլսահայ գրական աշխարհին, իր «*Յակոբ Տեմիրճեան ըլլալը*» հաստատելու: Եվ իրոք. Պոլսում «*մինչև կոնակը*» սև-սեթ մազերով, կարճահասակ, գլուղացու տեսքով, «*ոտքերը եսէնիով*» Տեմիրճեանին տեսնողները պիտի զարմանային ու կասկածէին: Չէ՞ որ գրողն ու բանաստեղծը ընդունված և կայուն իր տիպարն ուներ՝ սպիտակ մաշկ, «*սժգոյն դեմք*», «*սլացիկ հասակ մը*», մինչդեռ նա...:

Մնծուրու հայրն արդեն մեկ տարի էր, որ Պոլսում էր և կերավաճառի խանութ էր աշխատեցնում: Մեկ-երկու օր անց, փողոցում հանդիպելով համերկրացու, Մնծուրին տեղեկանում է, որ այդ օրը զավատ վերադարձող հայերի խումբ է ճանապարհ ընկնում: Եթէ խումբը երկու օր սպասէր, ինքը կվիրահասովեր և նրանց հետ կվերադառնար: Չէին կարող սպասել, նավը կմեկնէր առանց նրանց:

Նույն օրը Մնծուրին վիրահատվում է: Բժշկից տեղեկանալով, որ կարող է վերադառնալ երկիր, Մնծուրին վազում է նավահանգիստ, բայց. « - *Նաւը գնաց, ըսաւ Քերոբէն, քեզ ալ կը դնէինք նաւը դուն ալ կ'երթայիր, քսանը հինգ վայրկեան մը հագիւ եղաւ*»: Եվ լավ եղավ, որ ուշացավ: Սա արդեն երրորդ դեպքն էր նրա կյանքում, որ փրկվեց մահից: Մնծուրին անհամբեր սպասում է հաջորդ նավին և երկիր գնացող հայերի հաջորդ խմբին: Մենակ չէր կարող գնալ, քանի որ Կերսոնից, որը նավի վերջնակայանն էր, օրերով ճամփա պիտի գնար ոտքով, իսկ ճանապարհներին վիստում էին ավազակները:

«*Ո՞վ կրնար երեւակայել, թէ Սերպիոյ մէջ Աւստրիոյ գահաժառանգը պիտի սպանուէր...*» (Տեղեր, էջ 173): Սպանվել էր:

Եվրոպական պետությունները սկսել էին գայլային ախորժակով պատերազմել միմյանց դեմ: Թուրքիան ևս զորահավաք է հայտարարում. «*Փողոց, փողոց տաւուլ չալուեցաւ*»¹: Մնծուրուն հացագործ զինվոր են հրամանագրում: «Ալ ի նչպէս կրնայի երկիր երթալ» (Տեղեր, էջ 174): Նա դեռ չգիտէր, որ շուտով չէր լինելու ո՛չ երկիր, ո՛չ տուն, ո՛չ չէն, և ինքը ողջ կյանքում «*պատանդ մը*» պիտի մնար Պոլսում:

Կ. Պոլսի «Մեհեանում» տպագրված «Գիւղի գիշերներ» գործն ուներ «Փոքր Արմտան-Երիզիա» նշումը: Ի տարբերություն իր առաջին գործի («Հարս և սկեսուր»)՝ այստեղ Մնծուրու խոսք էր թափանցել արմտանյան բնանկարը, որն այլևս անբաժան էր մնալու նրա գործերից: Պատմվածքը ներկայացնում է աշնանային ուշագրավ մի համապատ-

¹ **Յ. Մնծուրի**, Տեղեր ուր են եղեր եմ, Իսթանպուլ, 1984, էջ 171: Այս գրքին հղումները այսուհետ կնշվեն շարադրանքում (Տեղեր և էջը):

* Թուրքիան պաշտոնապես պատերազմի մեջ է մտել 1914-ի նոյեմբերին:

կեր. արդեն ավարտվել են դաշտային աշխատանքները, մինչդեռ գյուղում շարունակվում է եռուզեռը, թոնիրներից էլնում է ծուխը, տեղի է ունենում բերք ու բարիքի շտեմարանավորում...

«Մեիյանում» տպագրված հաջորդ գործը՝ «Գիշերին մեջ», ավելի շուտ բնապատկեր է, քան պատմվածք:

1915-ի սկզբներին Թուրքիայում սկսվեցին զանգվածային ձերբակալությունները, տեղահանություններն ու արքայները. «1915 Մայիսին գաւառէն նամակ չեկաւ: Երկու անգամ պատասխանաւոր հեռագիր ուղղվեցաւ, չպատասխանուեցաւ: Երրորդիս պատասխանուեցաւ, թէ **հոս չեն, սեւթը մէճհուլ** (անհայտ վայր – Ա. Ա.) *դրկուեցան*»:

«Պապս, Մելքոն, 88 տարեկան էր, մայրս, Նանիկ, 55 տարեկան էր, տղաքս, Նուրհանը՝ 6, Մարանիկը՝ 4, Անահիտը՝ 2, Խաչօն՝ 9 ամսուան, կինս՝ Ողբտան՝ 29 տարեկան: **Ասունք ինտոք քալեցին:** Պապս մինչեւ – *Չուսագեղ Աղբիւր չէր կրնար երթալ*» (ընդգծ. – Ա. Ա.) (Տեղեր, էջ 174):

Այդ հետո Մնձուրին պիտի կախմիսցի քուրդ Թեմերից իմանար, որ ինչպես արմտանցիները, այնպես էլ ողջ գավառը «*սուներուն դոները ժամուն դոներուն պէս պագեր էին ու գատուեր...*» (Տեղեր, էջ 175):

Մնձուրին ևս նրանց շարքերում կլիներ, եթե Կ. Պոլսում չգտնվեր:

«*Իմ չմեննիլս... 25 վայրկեանի մը. միմիայն 25 վայրկեան ուշացումի մը կը պարտիմ... նավը ճամբայ ելեր էր*» (Տեղեր, էջ 175):

Փոստան ծանր ու գիշերային աշխատանքներին զուգահեռ՝ Մնձուրին շարունակում է ստեղծագործել, տպագրում մի քանի պատմվածքներ, որոնցից մեկը «Մեռեր է Քաղաքը ծիրանի» գործն է, որը գրողը «եղերերգութիւն» է անվանում, և որը վերաբերում է Ակն քաղաքին: Հետագայում «Հանդէս մշակոյթի» ամսագրում տպագրած իր «Ժամանակագրութիւնում» Մնձուրին գրում է, որ «*հիմա*» այլ ձևով կգրեր այդ գործը, թեև իր ժամանակին այդ պատմվածքը հավանել էր «Ոստանի» հրատարակիչ Միքայել Շամտանձյանը և լուր ուղարկել, որ «... նոյն շունչով գրուածքներ գրեմ իր հանդեսին համար»: Եվ ահա, ականջալուր լինելով, Մնձուրին խմբագրություն է ուղարկել իր ուշագրավ գործերից մեկը՝ «Ան Կերգեր Երգերու Երգը», որն ունի «*Անոնց որ երգերու երգը, Ակնայ երգը կ'երգեն*» ընծայականը և Յակոբ Մնձուրի* ստորագրությունը: Պատմվածքում ներկայացվում է «*թէ երգող, թէ նուագող*» թափառական աշուղին, որի կլանող նվագին ունկնդիր «*...լեռները սրածայր կ'ելնէին ու կ'իջնէին, ու այգիները շառագոյն պար կը դառնալին, մինչ գետակները այգուետ կը կայնեցնէին իրենց վագրերը...*»²:

«Ոստան» հանդեսում Մնձուրին տպագրում է նաև «Քրոջ սեր»³ պատմվածքը:

* Յակոբ Մնձուրի գրական անունը նրան տվել է իր մտերիմ, արևմտահայ մտավորական, գրող Չիֆթե-Սարաֆը (Աբխաղոմյան)՝ իրեն էլ մկրտելով Հովհաննես Ասպետ գրական անվամբ:

² «Ոստան», Կ. Պոլիս, 1920, թիվ 5-6:

³ Տե՛ս «Ոստան», Կ. Պոլիս, 1920, թիվ 10:

Մնձուրին գրում է, որ իր բուն ստեղծագործական կյանքը սկսել է 1923-ից. «Առաջին Աշխարհամարտէն առաջ գրածներս... չորս հինգ հաստ մըն են... Զինադադարին (այսինքն՝ 1918-ից հետո – Ա. Ա.) սկսայ երենայ ու... կը շարունակեմ»: «Կը շարունակեմ» Մնձուրու համար նշանակում էր գրել, անընդհատ գրել, նշանակում էր. «... Կը գրեմ, կ'արտագրեմ, կը հեղեմ» (Տեղեր, էջ 175):

Վերոհիշյալ վկայությունը առնվազն երկու առումով կարևոր է: Խոսքը «կ'արտագրեմ» և «կը հեղեմ» բառերին է վերաբերում: «Կ'արտագրեմ», ասել է թե՛ նորից գրել: Տարբեր առիթներով, այդ թվում և 1953 թ. «Հանդէս մշակոյթի» մեջ տպագրած «Ժամանակագրութիւն» գրության մեջ, Մնձուրին հաճախ է վկայում, որ ինքը դժվարությամբ է գրում. «... ի նչ մէկ, ի նչ երկու, ի նչ երեք, ի նչ չորս անգամ նստելով, ես որ ամէն նստելուս նորէն ետ կը դառնամ, առաջինները կը պատռեմ, նորէն կը գրեմ, ես որ ի նչ ալ ընեմ, շուտ գործ չեմ կրնար հանել»⁴:

«... շուտ չեմ կրնար գրել, ձեռքես ուշ, ձեր երեւակայածէն աւելի ուշ գործ կ'ելլէ,- գրել է Մնձուրին: - Գրածս կարճ ալ ըլլայ նոյնն է: ...Եթե ասեմ, որ դժվարութեամբ եմ գրում, շարքներով «մտքով կը բանիմ», դիմացինը «երեսիս պիտի նայի, մտային առողջութենէս պիտի կասկածի: ... Օրը երկու երեք էջ կը գրեմ»⁵:

Մնձուրին սովորություն ուներ գրելու փոքրիկ թղթերի վրա: Պատճառներից մեկն էլ այն էր, որ հաճախ գրում էր դեպի փուռ երկար ճանապարհին կամ ետդարձին ավիի մեջ (անգամ ավիի վրա), որտեղ կարող էր տեղ անել միայն փոքրիկ թղթիկը: Գրածները հաճախ չէր հավանում: Նորից էր գրում, մինչև որ հասնում էր իր ուզածին. «Նախադասութիւններս ուզածիս պէս բիրեղացուցած եմ: ... Խիճ չկայ: Անձերս իրականներու չափ իրական են: ... Տիպոկս բնական է, աստկէ ուրիշ կերպ չպիտի խօսէին անձերս. գործողութիւնս տրամաբանական է: Ես ու գրածս կը ժպտինք իրարու: ... Կը երգեմ, կը կատակեմ...»: Եվ նորից առկայծում է Մնձուրու հումորը. «Ի նչ ընեմ որ խելքս շուտ վրայ չգար»: «... Գիտեմ որ չպիտի կրնամ հրատարակել գրածներս: ... Բնութենէն առի, բնութեան կը դարձնեմ նորէն կ'ըսեմ ես ինծի: Բայց արտադրելու հեշտանքէն ձեռքս չեմ կրնար ետ քաշել: Ըսելը, տայը հետս պիտի ընթանայ»: Շարունակելով խոսել իր ստեղծագործական մեթոդի ու երկունքների մասին՝ նա գրում է. «Աստե՛ն մը նիւթս ես կը գտնէի բան մը գրելու համար: Ետքը հասկցայ որ ես գտնելու չեմ, ան գալու է ինծի»⁶:

Ինչ վերաբերում է «կը հեղեմ» արտահայտությանը, ասենք, որ Մնձուրին ապրել ու ապրելու էր ամեն օր «կրկնվող» և երբեք չկրկնվող իրադարձությունների բովում, որտեղ գերակշիռը նրա մտածումներն էին, որ վերաբերում էին անցյալին: Եվ ուրեմն, անընդհատ **լցվում** էր.

⁴ «Հանդէս մշակոյթի», Իսթանպուլ, 1953, թիւ 16:

⁵ «Մարմարա», Իսթանպուլ, 1955, թիվ 4039:

⁶ Նույն տեղում:

«Կը լեցուիմ, պէտք է պարպուիմ որ խաղաղիմ»⁷: Եվ քանի որ Մնձուրու գրականությունն իր «խառնվածքի գրականությունն է, ենթակայական է», նրա այդ «լցվելը» ավարտվում էր հեղելով, այլ խոսքով՝ անընդհատ գրելով, որը նա պարպվել է անվանում:

1920 թ. «Ոստանում» տպագրված «Քրոջ սեր» (թիվ 10) և «Աւետիս» (թիվ 14) գործերը վկայում են, որ Մնձուրին արդեն գտել էր իր ստեղծագործական թեման ու ոլորտը՝ գյուղը և նրա մարդիկ, ընդ որում, վերջին գործը նրա ստեղծագործական գագաթներից մեկն էր մնալու: Հատկանշական է, որ եթե իր նախորդ գործերում գրողը ներկայացնում էր գյուղական կյանքի առանձին դրվագներ, սովորույթներ ու պատկերներ և կամ մշակում ժողովրդական հեքիաթների սյուժեներ, այս վերջին երկու գործերում արդեն առկա է պատկերակերտման մնձուրիական տաղանդը, բնանկարներ կերտելու ձիրքը, սյուժեներ կառուցելու միտումը, մարդկային հարաբերությունների, հոգեբանության ու զգացմունքների խոր ծայքերը թափանցելու ունակությունը: Թերևս սխալ չի լինի ասել, որ եթե մի պահ Մնձուրու ողջ գրականությունը պատկերացնենք որպես մի գունազարդ հագարաթոչուն, նրա ոտքերը «Ոստանում» տպագրված այս երկու գործերն են, որոնք նրան անդառնալիորեն տարել են Արմտանի դաշտերն ու այգիները, ժողովրդական կյանքի ու ընտանեկան ջերմ հարաբերությունների գրավիչ աշխարհը: Այսինքն՝ այն, ինչ Մնձուրին անվանում է «բառերով նկարչություն ընել», «իր լիրիզմը, ռոմանտիզմը, ռեալիզմը ղնել»: Եվ այն միտքը, թե «կհավատամ, թե լավագույն բանը, զոր կրնայի ընել գյուղը տայն էր»⁸, արդեն այս շրջանից նրա համոզմունքն է դառնում, որն արտահայտվում է որքան իրապաշտական տարրերի օգտագործմամբ, այնքան էլ խոսքի զեղումնայնության, քնարականության, գունաերանգային պատկերների համակողմանի կիրառություններով, անգամ բառերին տրված ձայնային հատկանիշներով:

Այդ երկրի ու այդ մարդկանց կյանքի անբաժանելի մասն էր պանդխտությունը, որը հաճախ տղամարդկանց համար շարունակվում էր ողջ կյանքի ընթացքում՝ նրանց կանանց ստիպելով այրու կյանքով ապրել, կատարել տան ու դաշտի ծանր աշխատանքները: Պատահական չէ, որ հայկական գավառներում, Մնձուրու խոսքով ասած՝ «ամէնէն կանչուած երգերում» կային նաև այսպիսի տողեր. «Աս տարի ալ պիտի չգամ, // Թող ճամբուս չնային» (Տեղեր, էջ 98): Հայ կյանքի չարիքներից մեկի՝ պանդխտության վերաբերյալ Մնձուրին գրել է տարբեր տարիների (այդ մասին նա շատ է խոսում մանավանդ «Տեղեր ուր ես եղեր եմ» գրքում): Գրողի այդ թեմայով գրած առաջին գործը եղավ 1920 թ. Կ. Պոլսի «Ոստան» հանդեսում տպագրած «Աւետիս»⁹ պատմվածքը, որը

⁷ «Մարմարա», Իսթանպուլ, 1968, 27 հունիսի:

⁸ **Հ. Մնձուրի**, Կապույտ լույս, Եր., 1968, էջ 15:

* Մնձուրու բոլոր երեք քույրերը մահացել են մինչև բռնագաղթը հարսնահար հիվանդությունից:

⁹ Տե՛ս «Ոստան», Կ. Պոլիս, 1920, թիվ 14:

նրա լավագույն գործերից մեկն է՝ գրված գեղարվեստական բարձր մակարդակով:

Այս պատմվածքից հետո Մնձուրին Ստամբուլի մամուլի զանազան օրգաններում տպագրեց բազում գործեր: Բայց պիտի անցնեին տասնյակ տարիներ, մինչև որ նա կունենար իր պատմվածքների առաջին գիրքը («Կապոյտ լոյս», 1958):

«Ոստանում» տպագրվել է նաև «Եղնիկ աղպարը» հեքիաթը (մաս Ա, 1920, թիվ 19-20)՝ խիստ բնութագրական ընծայականով. «*Լեռներուն երեսը, ճամբաներուն եզերքը անթաղ մնացած մեր բիրաւոր նահատակ մանուկներուն հոգիներուն*»: Այն մանուկներին, որ սուրբ եղնիկների տեսքով շարունակում են ապրել հայ հոգիներում: Նույն ամսագրի 1922 թ. թիվ 21-24 միացյալ համարում Մնձուրին տպագրեց այդ հեքիաթի Բ մասը:

Հեքիաթագիր Մնձուրին սովորական առումով այնքան էլ հեքիաթագիր չէ: Նա, ինչպես այս, այնպես էլ հետագայում գրած տասից ավելի գործերում հանդես է գալիս մշակողի դերում՝ հիմք ընդունելով թափառող սյուժեների տարբերակներից որևէ մեկը:

Այդ ժանրի գործերում Մնձուրին հաճախ է դիմում նաև պատրաստի նյութերի, որոնցից էին ժողովրդական բանահյուսությունն ու ժողովրդական գրույցները, որոնք տեղային պատումի տարբերակներ էին, և կամ՝ ինքը՝ Մնձուրին էր նման բնույթ հաղորդում դրանց, հերոսների գործունեության ոլորտը տեղափոխում Արմտանի միջավայր, որը նրան հնարավորություն էր տալիս գրելու իր հարազատ բնաշխարհի մասին. «*Հեքիաթներս միշտ իմ գիղիս մէջ եղածի պէս կ'ըսես*»¹⁰, վկայում է Մնձուրին իր «Արմտան» գործում:

Կ. Պոլիս գալուց հետո Մնձուրու կյանքում շատ բան էր փոխվել, կամ, որ ավելի ճիշտ է, ոչինչ չէր փոխվել. նույն դառը ճակատագիրն էր, իր ժողովրդի ու իր հարազատների կորստից ծնված անանց մորմոքները, գրելու սովայտանքները, տնտեսական ծանր կացությունը:

Ընտանիքը պահելու համար Մնձուրին կատարում է ամենազանազան աշխատանքներ. «... *խանութպան էի: Կերավաճառ էի, անասնոց գարի, խոտ, թեփ, յարդ կը ծախեի: ... ածուխ ալ կը ծախեի: ... ուրիշ ի նչ կրնայի ընել, ստիպված էի: Վեց հոգի էինք* (ինքը, կինը, հայրը, երեք երեխաները. – Ա. Ա.), *պիտի ապրուէինք*» (Տեղեր, էջ 99):

Մնձուրին հայտնվել էր մի քաղաքում, որը թեն ծանոթ էր, սակայն օտար էր ու օտար: Շահասեր, նենգ ու եռուզեռով լեցուն այդ քաղաքում «*յետին թուղթի կտոր մը, փաստաթուղթ մը*» չունէր, որ իր «*բան մը գիտնայր ապացուցեր*», թույլտվություն ունենար ուսուցիչ աշխատելու:

Պատահում է այնպես, որ նրա ծանոթ պարսիկ գնորդները խաբելով ապառիկ տանում են ապրանքը և գումարը այլևս չեն տալիս: Եվ ոչ միայն նրանք: Խոսելով իր այդ վիճակի մասին՝ Մնձուրին դառնութեամբ

¹⁰ Թ. Մնձուրի, Կապոյտ լոյս, Իսթանպուլ, 1958, էջ 90:

յամբ (իսկ գուցե և հումորով) գրում է. «Մկիւտարի խանութս գոցեցի: Ինչ ունէինք կատուին բեռցայ» (Տեղեր, էջ 104): Այսինքն՝ երկարամյա աշխատանքից հետո ողջ ունեցածը մի կատվի բեռ է եղել:

Մնձուրին տասնյոթ տարի աշխատում է Թոքթաթյան պանդոկում որպէս գրագիր, հաշվեկալ, արկղակալ, քարտուղար, իսկ երբ պանդոկը փակվում է, մինչև իր մահը ծառայում է Տագսիմի Սբ. Հարություն հայկական փոքրիկ եկեղեցում որպէս եկեղեցական և մոմավաճառ...

Բայց ուր էլ գնաց և ինչ էլ արեց, Մնձուրին նույն Մնձուրին էր, և... գրում էր. չգրել չէր կարող, որովհետև անընդհատ *մնձրվում* էր նրա սիրտն ու հոգին: Գրում էր աշխատանքի ժամերին՝ իր գրությունները թաքցնելով մանավանդ ղեկավարի (իր գրություններում նրան *«կոտո»* է անվանում) հսկող աչքերից, գրում էր անկողնու մեջ, քայլելիս, անգիր գրականություն էր ստեղծում՝ հետագայում գրառելու համար, որոնց մի մասն էլ մոռացվում էր, երբեմն՝ կրկնվում:

Դժվարին, եթե չասենք անհնար մի բան էր միատեղել անընդհատ հոսող դառնաղետ հուշերը և դրանց գեղարվեստականացումը, գրականության վերածումը, որը Մնձուրու պարագայում նշանակում էր նորից ու նորից անթեղել վիշտը և, մանավանդ, հարություն տալ մահացածներին, երբ այդ բոլոր մահացածներն իր հարագատներն էին, և ուրեմն՝ նորից ու նորից պեղել հենց իրեն, խորանալ իր մեջ, արթնացնել իր հոգու վերքերը: Հենց սա էլ Մնձուրուն առանձնացնում է գյուղը պատկերող մեր մյուս ստեղծագործողներից, ինչպէս և *«հոգևոր հայրենիք»* դավանող մի շարք գրողներից՝ Վ. Շուշանյան (*«Ճերմակ Վարսենիկ»*), «Գարնանային»), Բ. Նուրիկյան (*«Այգեկուտք»*) և այլք, ովքեր համազգային կորուստը ջանացին փոխարինել հոգևորի գաղափարով: Մնձուրին խնդրին մոտեցավ այլ ելակետով՝ հայրենիքն ընդունելով որպէս իրական գոյ, որպէս անանց իրականություն ու *կենդանի եզերք շարունակելի* դարձնելով այդ երկիրն ու նրա մարդկանց ֆիզիկական կյանքը: Դրա ապացույցը չէ՝ այն իրողությունը, որ Մնձուրին իր գործերը գրում էր ներկա ժամանակով: Եվ նա ոչ այնքան *«գրում»* էր, որքան *«գրուցում»* ու պատմում, ինչպէս որ կգրուցեր ողջ մարդու հետ, պատմում այնպէս, ինչպէս դրանք գալիս էին՝ առանց չափազանցումների ու հնարումների (ինչ պիտի հնարեր, ինչպէ՞ս պիտի հնարեր, երբ այդ ամենն այնքան խորն էր, այնքան ճշմարիտ, այնքան աննախադեպ): Եվ արդյո՞ք հնարավոր էր աղետը պատմել կամ գրել, դարձնել գրականություն, չափել ինչպէ՞ս, և չափել ինչո՞վ: Չէ՞ որ գրողական տաղանդ ունենալուց առավել այստեղ պահանջվում էր այդ ամենի այլասացություն, նաև հրահրում՝ իր կերտած մարդկանց կյանքի պատմություններից ընթերցողի մեջ առաջացող այն հարցի, թե հապա՞ռ էր այդ մարդիկ, ո՞ր էր այդ կյանքը, ինչո՞ւ չկան:

Ըստ Մնձուրու՝ գրողն իր «ամեն ըսածին մեջ» ինքը պետք է լինի, իր մտածումները, կեցվածքը: Ասել է՝ ամեն գրող իր *«պատկերը»* պիտի

տա: Եվ այդ «պատկերը» Գյուղ-Մնձուրին էր՝ այն աստիճանի միաձուլյ, որ Ռ. Հատտեճյանին իրավացիորեն գրել է տվել, որ գրողն ու Մնձուրի մարդը «նոյնցած են, մեկ մարմնի վերածուած են», և դեռ ավելին՝ «իր արտաքին երևույթն իսկ» իր գյուղի ու գրականության պատկերն է:

«... իմ մեջս կապրեին հիշատակները, տեսարանները իմ տունիս, իմ գյուղիս, իմ մանկությանս օրերուն: Ատոնց վերհիշումները բուռն կարոտներ կարթնընցնէին իմ ներսս»¹¹, - գրում է Մնձուրին իր «Սիրահարություն մը» պատմվածքում, որը նշանակում էր, «բուռն կարոտներ» առաջացնելուց զատ, նաև «բուռն» հետաքրքրություններ առաջացնել և ցավալի հարցեր շոշափել, դրանցով հանդերձ՝ խոհերի մղել: Այդ կարոտներ դարձած վերհիշումներն էլ գրական նյութ են «հայթայթել» Մնձուրուն, դարձել գաղափար ու ասելիք, սփռվել նրա գրություններում: Այլ խոսքով՝ Մնձուրու համար գրականությունը գյուղն էր, գյուղը՝ հողը, իսկ հողն այլ բան չէր, քան՝ հայրենիքը:

Հարցնենք. որտեղից այսքան կարոտ, մի թե այն պիտի բացատրել միայն նրա մարդկային խառնվածքով, որը միայն մի կողմն է: Մյուսը, և շատ ավելի կարևորը, համազգային այն ցավը, կորուստը, մորմոքը չէ՞ր, որ Մնձուրու համար դարձել էր կյանքի մտածում, ապրելու ձև ու ուղեկից, որը և ասելիք ու գրելիք էր դառնում:

Մնձուրին սիրում էր գյուղը: Եվ այդ գյուղ ասվածը նա տեսնում էր նաև վեպերի ու քերթվածների միջից. «Գրողները հաճախ հոգիին ի՛նչ դողացումներով, ի՛նչ քնարերգությամբ, հայրենաբաղձիկ ի՛նչ ոգեկոչումներով երգած էին զայն, խոսած անոր վրա: Ես կհամակվեի, կհափշտակվեի միշտ ալ զգացական այդ դրվագներեն» (Երկեր, էջ 86):

Ինչպես նկատելի է, գրելու գործում քիչ դեր չեն խաղացել «համակող» ու «զգայական» գործոնները, որոնք Մնձուրու մարդկային խառնվածքի հատկանիշներն էին իհարկե: Բայց առ այդպիսի գրականության Մնձուրու նախասիրությունը պետք է բացատրել նաև մի ուրիշ հիմնավորմամբ՝ «հայրենաբաղձիկ» բառով, որ օգտագործում է գրողը վերոհիշյալ հաստվածում, և որը՝ որպես որակում, ամենայն հավանականությամբ ստեղծել է ինքը, որը ոչ միայն որպես էություն ու ձգտում է գոյություն ունեցել նրա մեջ, կարոտ ու մորմոք, այլև կոչում ու կանչ, հեռուներից լավող անկանգ մեղեդի, որին հավելվել է գրականության դերի նկատմամբ ունեցած այն համոզումը, որ ամեն մի գրականություն իր ժողովրդի «հոգին ու գեղեցկությունները պետք է ցուլացնի» իր ավիշը, իր ներշնչանքը հայրենի հողից, բուն իսկ ակից առնելով:

Մնձուրու ստեղծագործական կյանքը, զարգանալով նախապատերազմական շրջանից, բուն ծավալում ստացավ զինադադարից հետո: Նրա գործերը տպագրվեցին «Ժամանակում», «Ազդարարում», «Անիում», «Դեպի լոյսում», «Հանդէս մշակոյթի»-ում» և մանավանդ «Մարմարայում»:

¹¹ Հ. Մնձուրի, Երկեր, Եր., 1986, էջ 86: Այս գրքից կատարված մեջբերումներն այսուհետ կնշվեն միայն Երկեր և էջը:

Այս ընթացքում գրում է նաև «Նազար» թատերախաղը (լույս է տեսել Բոստոնի «Հայրենիքում», 1929-ին) և «Երկրորդ ամուսնություն» վիպակը («Ազդարար», Կ. Պոլիս, 1931): Մնծուրին իր այս երկու գործերն էլ չի հավանել: Առաջինը մեղադրամա է, որտեղ թյուրիմացության ու կասկածամտության հետևանքով իր ընտանիքից պանդխտությամբ երկարատև բացակայած հայրը սպանում է արդեն մեծացած ու անճանաչելի դարձած և մոր անկողնում քնած իր որդուն: Երկրորդում Մնծուրին որոշ ինքնակենսագրական տարրերի օգտագործումներով ներկայացնում է եղենից մազապուրծ գաղթականների, ովքեր կորցրել են իրենց հարազատներին ու ընտանիքները, որոնցից են և վիպակի հերոս տեղեկետար Գեորգը և նրա կինը՝ Արաքսին, որոնք ամուսնացել են երկրորդ անգամ, կազմել նոր ընտանիք և ջանում են նորից կառչել կյանքին:

Վիպակը բավականին նյութ է տալիս 1920-ական թվականների Պոլսի կյանքի ու առօրյայի մասին, բայց բացակայում է մթնոլորտային այն գրավիչ երանգավորումը, որը բնորոշ է Մնծուրու գյուղական կյանքը պատկերող գործերին: Ինչպես արդեն նշեցինք, վիպակում ներկայացվող որոշ պատկերներ արտացոլում են Մնծուրու ճակատագրի բնորոշ իրողություններ և մանրամասներ, ինչը և ուշագրավ է դարձնում շարադրանքը¹²:

Այս ընթացքում է, որ պոլսահայ մամուլը, գրականությունը, որի մասին խոսելով «Մարմարա» թերթն այն բնութագրել է *«ոչ արգասաբեր»* հողի վրա աճող, *«անապատի մը մէջ ինկած»*, սկսում են քիչ-քիչ անունդ ստանալ նաև Մնծուրու գեղարվեստական գործերի շնորհիվ:

Մնծուրին գրում էր. գրում էր անցյալ մի աշխարհի մասին, ուր կյանքը *«կհնար, կժայթքեր դուրս բոլոր անկյուններեն»*:

Անժխտելի ճշմարտություն է, որ գրողի բուն ճանաչումը միշտ էլ տեղի է ունենում գրքով: Հասպա ինչո՞ւ Մնծուրին գրում էր ու իր գրածները գիրք չէր դարձնում: Պատճառների պատճառն այն գերագույն, անգամ ծայրահեղ ներամփոփվածությունն էր, որ Մնծուրին ցուցաբերում էր կյանքի բոլոր հարաբերություններում, այդ թվում և գրականության ասպարեզում: Իհարկե կար և տպագրության ծախսերի խնդիրը, մանավանդ այն համոզումը, որ *«եթէ իմ գործս որեւէ շահեկանութիւն չի բերեր, ոսկեկազմ տպագրութիւնով ալ ելլէ, կը մոռցուի: Հակառակը, հողերուն տակն ալ մնայ, կը փնտռուի, կը հանուի»*¹² (ընդգծ. – Ա. Ա.):

Եվ ահա, 1958-ին Ստամբուլի գրական հասարակությունը և նույն Սանուց միությունը¹³ ձեռնարկում են Մնծուրու պատմվածքների

* Վիպակը գրողի տպագրված առաջին գիրքն էր:

** Մնծուրին չի հավանել նաև իր մի շարք այլ գործեր և ցանկություն է ունեցել դրանք նորից *«կաղապարել»*, *«շտկումներ»* կատարել:

*** Մնծուրին, *«Զինադադարին վերջաւորութեան»* (1921-ին) ամուսնացել էր անապատից՝ արքայից Կ. Պոլիս վերադարձած Արտանույշ անունով մի այրի կնոջ հետ, որից ունեցավ երեք զավակներ:

¹² Յ. Մնծուրի, Կռունկ ուստի՞ կուգաս, Իսթանպուլ, 1974, էջ 11:

**** Մինչ այդ միությունը նշել էր Մնծուրու գրական գործունեության 50-ամյակը:

տպագրությունը առանձին գրքով, որն իր բնութագրական վերնագրով գրողի ծննդավայրի լեռնաշղթայի և երկրի գույները, բույրերն ու կյանքն էր ներկայացնում, նրա մարդկանց բազմահարուստ աշխարհը՝ «*հալեցված*» բնաշխարհի գեղեցկություններով:

«Կապոյտ լոյսը»^{*} ընդգրկում էր կորսված աշխարհի տեսիլն ու Մնձուրու գրելառճի կապոյտ լուսեղենությունը: Լույս, որ հառնում էր հայրենի հողից ու նրա մարդկանցից: Հուրախություն, թե տխրություն՝ գրքի հեղինակն այդ ժամանակ արդեն... 72 տարեկան էր, և ինչպես նախկինում, այնպես էլ տպագրման ժամանակ ոչ մի նախաձեռնություն չէր ցուցաբերել իր գործերը գրքի ձևով ընթերցողներին մատուցելու համար:

Գիրքը, որ բաղկացած էր 320 էջերից, ընդգրկեց Մնձուրու 50 պատմվածք: Գրքի հրատարակիչները միանգամայն ճիշտ էին նկատել տալիս, որ Մնձուրու գործերը գրքի ձևով տպագրվելով՝ «... ոչ միայն կորուստ է կը փրկուի հայ վաստակաւոր գրողի մը ինքնատիպ մէկ գործը, այլ մանաւանդ կը վերայայտնուի անդարձ կորուսած կեանք մը...» (ընդգծ. – Ա. Ա.) (Կապոյտ լոյս, էջ 5):

Շուրջ տասը տարի հետո՝ 1967-ին, տպագրվեց Մնձուրու «Արմտան» ժողովածուն, որի նախաձեռնողները եղան Ռոպերտ քոլեջի պրոֆեսորները, 1974-ին՝ «Կռունկ ուստի՝ կուգաս» պատմվածքների ժողովածուն, որը նախաձեռնել էր «Մարմարայի» խմբագրությունը: Գրողի երկու գրքերը կրում են տեղավայրերի անուններ՝ «Կապոյտ լոյս» (լեռան), «Արմտան» (գյուղի): Եվ դա պատահական չէր. չէ՞ որ դրանք հենց այդ աշխարհում ապրող մարդկանց կյանքն էին պատկերում և նաև շեշտադրում սիրելի եզերքը, շեշտում այն կապը, որ կար նրանց միջև: Երրորդ՝ «Կռունկ ուստի՝ կուգաս» գրքի վերնագիրն ավելի լայն ու խորքային ասելիք է պարունակում. մի կողմից ընդգծում սարսուռ առաջացնող «ուստիի» բացակայությունը, մյուս կողմից՝ նրա հոգևոր «կուգասի» հարատևությունը: Գրողի մահվանից վեց տարի հետո՝ 1984-ին, Ստամբուլում «Ռշտունի Գարագրգեան գրական մատենաշարի» հովանավորությամբ տպագրվեց Մնձուրու ինքնակենսագրական, 1914-1970-ական թվականներն ընդգրկող, ինչ-որ տեղ նաև հիշողություններ և օրագրական նյութեր պարունակող «Տեղեր ուր ես եղեր եմ» գիրքը (ընտրված վերնագիրը պատկանում է Մնձուրուն):

Ինչպես վկայում է իր «Ի՛նչ ըրի» գրության մեջ, Մնձուրին գրել է հարյուրավոր պատմվածքներ, որոնց մի մասն այսօր էլ շարունակում է մնալ թերթերի էջերում, նաև՝ զանազան գրողներին, գրքերին, իր գրականությանը վերաբերող տեսական վերլուծություններ ու գնահատումներ, գրականագիտական հոդվածներ, դատումներ, նամակներ,

^{*} Կապոյտ լոյս լեռը երկգագաթ էր և իր այդ ճեղքվածությամբ ասես խորհրդանշում է նաև Մնձուրու ճակատագիրը, որը եռաճեղք եղավ՝ երեք անգամ փրկվեց մահից, և անցնող տարիները նման եղան այդ լեռան այրված ու խարկված լանջերին:

հարցազրույցներ ունեցել, որոնց բոլորին «Ժամանակագրություն» անվանումն է տվել, նաև՝ նկարագրություններ, պատկերներ, իր խոսքով ասած՝ «այլևայլ» ու «հայրենական գիւղանկարներ», հեքիաթներ, մեծ մասը նույնպես ցրված տարբեր թերթերում ու հանդեսներում*։ Ուշագրավ մի մանրամասն. ի՞նչ պիտի հասկանալ մնծուրիական «այլևայլի» տակ. կարճ գրություններ, գրականության հետ քիչ առնչություն ունեցող գրառումներ, իսկ գուցե և գրական որևէ ժանրի մեջ չտեղավորվող, յուրատեսակ՝ գուտ մնծուրիական խոհեր, որոնց նա ժանրային առանձին պատկանելություն է վերագրում, անգամ անվանումներ տալիս՝ «գետանկար», «ձյունանկար», «դաշտանկար», «գյուղանկար»...

Ավելի ուշագրավ է «հայրենական գիւղանկար» որակումը, որը շատ բնորոշ է նրա ողջ գրականությանը, որտեղ գյուղ և հայրենիք հասկացությունները հանդես են գալիս միաձույլ, միմյանց լրացնող, միմյանցով պայմանավորված բաղադրիչներ, որտեղ շեշտը դրվում է «հայրենական» բառի վրա՝ ոչ թե լուրջ գյուղանկար, այլ՝ հենց **հայրենական** գյուղանկար։ Մա չէ՞ր, որ հաստատում էր Մնծուրին, երբ գրում էր, որ իր գրականությունը «մէկ ուրիշ տեսակ է», թե՛ «ժիռնալիսթ» (տեղագրական – Ա. Ա.) *գրականություն* է։ Իսկ, ինչպես հայտնի է, «*գյուղանկարը*» տեղագրության նեղ առումն է, լայն առումը «*հայրենանկարն*» է։ Այո, Մնծուրու պատկերած աշխարհն իր գյուղն է ու նրա մարդիկ են, բայց այդ «*իբրը*» էլ ավելի լայն հասկացություն է։ Այդ «*իբրը*» ողջ Արևմտահայաստանն է, ամեն հայկականն է, նաև համամարդկայինն է, որոնցով և առանձնանում է գրողի խոսքը, դառնում ամենքինը։ Ամենաուշագրավն այն է, որ թեև Մնծուրին **ներկա** է իր բոլոր պատմություններում, նրա պատմվածքներն այն տպավորությունն են թողնում, որ գրողն **իբր** գյուղի մասին չէ, որ գրում է, այլ՝ **իմ, քո, նրա՝ ամենքի**։ Եվ թեև Մնծուրին գրում է, որ «... *պիտի չսահմանափակուէի անոր* (գյուղի Ա. Ա.) *մէջ, եթէ գիւղին գոյութիւնը շարունակուէր։ Անոր անհետացումն ալ պատճառներէն մէկն է*»¹³, սակայն իրականում, նա չի էլ սահմանափակվել նրա շրջանակում, և «*Անորը*» վերաբերում է նաև Երկրին, որն ամենայն համակողմանիությամբ էլ ներկայացրել է. «... *եթէ աւելի գործ մը չտուի, կ'ուրախանամ որ գոնէ պատմեցի շատը այն ամէնքէն որ գիտէի, ունէի, պետք էր որ չմնար իմ մէջս։ Ես իմ օրերուս գաւառը** պատմեցի, իմ գիւղս՝ Արմտաններս կեդրոն ըլլալով Երզնկան, Քեմախը, Ակը. Ինչպես Չմշկածագը, Արաբկիբը, Տիվրիկը, ինչպես Զկոթը, Աշխարովան, Շապին Գարահիսարը*» (ընդգծ. – Ա. Ա.) (Տեղեր, էջ 203)։

Առկա է Մնծուրու նաև մէկ ուրիշ վկայություն, որը շատ ավելի է ընդլայնում նրա գրականության ընդգրկումները. «*Այո, գիւղէն, գիւղա-*

* Նրա գրությունների մի մասն էլ 1921-ին այրվեցին Սլյուտարի հրդեհում։

¹³ «Մարմարա», Կ. Պոլիս, 1968, 27 հունիսի։

** «*Իմ օրերուս գաւառը*» ասելով Մնծուրին հասկանում էր «*մինչեւ 1914-ի օրերու գաւառը*»։

ցիւն են իմ պատմութիւններէս շատը, **բայց ես մարդը կը պատմեմ**»¹⁴ (ընդգծ. – Ա. Ա.): Եվ այդ մարդը «*նչ այսօրվանը, 1914 են առաջվան*» մարդն էր (Կապույտ լույս, էջ 13):

Մնձուրին վեպ չի գրել (թեև համագումար՝ նրա գրածը մի մեծ վեպ է), գրածների մեծ մասը պատմվածքներ են «*չորս հինգ կամ մի քիչ ավելի էջերով*», որոնց մեծ մասը «*ամենօրեայ կեանքին*» պատկերումներ են: «*Այդ օրը իմ անձս կամ իմ անձերս ո՞ւր գացեր են ի նչ ըրեր են*» (Տեղեր, էջ 203):

Ինչո՞ւ էր գրում Մնձուրին: Հարց, որ նաև գրողն է ինքն իրեն տվել:

«*Ես, ինչպէս ամէնը իմ շրջապատէս, դրամ շահելու համար չենք գրեր: ... Մենք ոչ թե գրելով, այլ արհեստ մը, պաշտօն մը, որնէ գործ մը, ծառայութիւն մը ընելով կ'ապրինք: Ուրեմն ինչո՞ւ կը գրէք: Մի՛ գրէք: Աս չենք կրնար ընել: ... Չենք կրնար միայն դիտել: Պիտի պարպուինք: Պիտի ըսենք: Ի՞նչ է գրականութիւնը ամէնէն վերջը, մէկ բառով: ԸՍԵԼ Է: ԻՆՔՉԻՆՔԸ ԳԼԵԼ Է: ... իսկ երբ կը գրենք, ըսենք մանաւանդ խոսքեր գոր մեր խելքովը կ'երեւակայենք թէ ուրիշ մը պիտի չկրնար գտնել, ըսել, կը պայծառանանք, կը ճառագայթենք, տանը ապրուստին, դրամին ամէնէն վերջը կանդրադառնանք*» (Կռունկ, էջ 11):

Այս չէ՞ յուրաքանչյուր ստեղծագործողի էությունն ու մտածումը՝ ասել բաներ, որ ուրիշը չի կարող, **ասել իրեն** ու իր խոհերը (որոնք հաճախ ընթերցողին են նաև), պարպվել՝ նոր նյութերով լցվելու համար, և ուրախանալ, պայծառանալ գրածներով:

Մնձուրու պատմվածքներից ցոլանում է անտեսանելի մի լուսեղէնություն, որն ընթերցողի մեջ լավատեսական տրամադրություններ է արթնացնում, և դա՛ չնայած այն բանին, որ Մնձուրին գրում է մի աշխարհի ու նրա մարդկանց մասին, որոնք չկային (նրանք ողջակեզներ էին վայրագ մի պետության), որոնք ունեին բազում աստվածներ ու սրբեր, որոնց համար եկեղեցիներ, վանքեր, աղոթատեղիներ էին կառուցել, և որոնց կյանքում գերագույն սրբությունը ստեղծումն ու աշխատանքն էր, որը բերկրանք էր պատճառում ամենքին, տոն էր նրանց համար, Մնձուրու խոսքերով ասած՝ «Արտային հանդես» («Մի-րահարություն մը»), հավելենք՝ նաև «*ստեղծագործական հանդես*»:

Գաղտնիքը, անշուշտ, գրողի պատումի այն վարակիչ ձևն է, որն ընթերցողին ներառում է իր մեջ, ներկա ու մասնակից դարձնում պատմվող դեպքերին, պատրանք ստեղծում, մոռացնել տալիս, որ այդ ամենը անցյալ են և ոչ թե ներկա:

Իսկ ո՞ւր մնաց ողբերգականը: Չէ՞ որ Մնձուրու գրությունները վերջիվերջո **մեծ կորուստի** հետևանքն ու արդյունքն են և հենց այդ **կորուստի** մասին են: Հարցը ինքնին սխալ չէ՞, գուցե պետք է հարցնել որտե՞ղ է ողբերգականը, քանի որ այն ներսում է, առաջին հայացքից գուցե և ոչ միշտ տեսանելի: Պատասխանը՝ ինչո՞ւ չկա այդ մարդկանց

¹⁴ Նույն տեղում:

կյանքի հետագա պատմությունը հարցման մեջ է, ինչո՞ւ այդ պատմությունը պատմություն է մինչև 1914 թվականը՝ դառն իրողության մեջ է:

Մնձուրու գրականությունը օժտված է նաև մեկ այլ հատկանիշով. այն ոչ միայն սեր, այլև հպարտություն է առաջացնում ընթերցողի մեջ, որ եղել է մի այդպիսի աշխարհ, ու եղել են այդպիսի մարդիկ՝ միշտ տարված հողի ու աշխատանքի պաշտամունքով, տուն ու տեղի ամենօրյա գործերով, հավատարիմ եղել կրոնական ու ազգային ավանդույթներին, արտքաղի ամիսներին քնել բաց երկնքի տակ ու տարվել աստղերի խաղով, պանդխտել, բայց անպայման տուն վերադարձել, ժամերով քայլել գրավիչ կնոջ հետևից ու համարձակություն չունեցել տենչանքը հայտնել ու նաև խորամանկել, երգիծել, պարծեցել, ժպտացել ու տխրել, կենդանու հետ ծանր աշխատանք կատարել ու նրա հետ խոսել, ինչպես մարդու հետ մարդն է խոսում:

Այդ հպարտության, այդ լավատեսության, այդ լուսեղենության առկայությունը մնձուրիական գրականության մեջ արդյունք է նաև լեզվապատկերային այն հարստությունների, որոնցից են գունային, երանգային և անգամ ձայնային պատկերավորումների կիրառությունները նրա գրեթե բոլոր գործերում, որն ինքնին առանձին քննության նյութ է:

Կյանքի վերջերին Մնձուրին թեև նշել է, որ իր լավագույն գործերը գրել է *«վաթսունէս, եօթանասունէս, ութսունէս վերջը»* (Տեղեր, էջ 184), սակայն դա այնքան էլ այդպես չէ, քանի որ 1920-ականներին նա արդեն գրել էր մի շարք նշանավոր ու արժեքավոր գործեր՝ *«Աւետիս»*, *«Ան կը երգեր երգերու երգը»*, *«Մունջը»*, *«Քենը»* և այլն:

Սկսած զինադադարից (1918) Մնձուրին միշտ երազել է բնակություն հաստատել Հայաստանում: Ցավոք, այդ բաղձանքը իրականություն չդարձավ: *«Ի՛նչ կը ցաւիմ որ հոս մնացի, ես որ գալ ու հող մնալ կուզեի»*¹⁵: Մինչև հիմա իրականություն չեն դարձել նրա կողմից գրականության և արվեստի թանգարան ուղարկված մի շարք գրությունների ու գործերի տպագրությունը. *«Հոս չկրցայ հրատարակել... Պիտի հրատարակե՞ն, ի՞նչ գիտեմ... ֆաթալիզմին կը յանձնեմ, թող ըլլան ինչ որ սահմանուած է»* (Տեղեր, էջ 209):

1968 թ. դեկտեմբերին՝ տարեգլխից *«երկու օր առաջ»*, Պուլի բլրալանջերից մեկից իջնելիս, որը նրա *«ամենօրեա ճամբան ալ չէր»*, թեթև ձյան և փողոցում թափված երկաթե լարերի պատճառով, որոնք փաթաթվում են ոտքերին, Մնձուրին վայր է ընկնում և կոտրում ձախ սրունքի ոսկորը, որին հետևում է մինչև իր մահը (1978), տասը տարի տևած հիվանդությունը՝ նրան զրկելով իր առավելություններից մեկից՝ երկար քայլելու հնարավորությունից՝ այլևս անցյալ դարձնելով այն, որի մասին գրում էր. *«... իմ սրունքներս իմ հպարտութիւններս են»* (Տեղեր, էջ 192):

Առանց հոգնելու նա ավելի քան ութսուն տարի քայլել էր Արմտա-

¹⁵ «Բագին», Բեյրութ, 2021, թիվ 1, էջ 65:

նի սարերում ու ձորերում և Պոլսի ծուռ ու մուռ փողոցներով...: Բայց «...աստուածները չհանդուրժեցին, նախանձեցան քայլելուս, ոտքերս պատժեցին, որովհետև ես ըմբոստացայ իրենց դէմ, կը յայտարարէի թէ ես չեմ յոգներ, ժամերով կը քալեմ» (Տեղեր, էջ 193):

Մնձուրին ապրեց 92 տարի: Բայց դրանք իրականում տարիներ չէին, այլ հատիկ-հատիկ ձգված օրեր, հոգսերով լեցուն ժամեր, թախիծով պարուրված րոպեներ, միշտ լցված նահատակ դարձած իր տնեցիների, համագյուղացիների, հայրենակիցների կրած սարսուռներով:

Մահվանից հետո էլ տարիներն անգոր գտնվեցին նրա հանդեպ. Մնձուրու գրականությունը այլևս հավերժի ճամփորդը դարձավ հաստատելով, որ Արմտանը, ողջ արևմտահայությունը, հանձին այդ գրականության, գտել է իրեն **ապրեցնողին**, իր վերացումից հետո՝ իրեն **մոռացնել չսովորին**՝ աշխարհին ուղղելով գրողի տապանաքարի վրա փորագրված խոսքերը. «Գիրը չի մեռնիր, գիրը անմահ է»:

Ամփոփելով հարց տանք ինքներս մեզ. ո՞րն է մնձուրիական գրականության ամենագլխավոր արժանիքը, և որտե՞ղ է Մնձուրու մեծությունը: Մեծությունը **վկայություն տայն է**: Վկայություն **գեղարվեստի հանդերձով**, որը շատ ավելի անժխտելի ապացույց է ու տևական, քան չոր փաստն ու չոր խոսքը: Նա այդպես էլ անվանում է իր գրականությունը՝ «*վկայություններս ըսել*»:

Թուրքական բռնակալությունը զենքով ու զորքով ոչնչացրեց մի ողջ եզերք և նրանում ապրող ու արարող ժողովուրդ: Մնձուրին իր գրականությամբ **վերականգնեց** ամեն ավերվածը, հաստատեց, որ նրանք ապրել են իրենց հարազատ հողի վրա և շարունակելու են իրենց կյանքի ընթացքը շատ ավելի երկար, քան այնտեղ բնակալածները: Եվ քանի որ Մնձուրու հերոսները «*քոչուս*» են պատմվածքից պատմվածք, ասելիքից ասելիք, արդյունքում մենք ունենում ենք անկանգ կյանքի մի ընթացք, որն անկասելի է, և որի անունն է «Կապոյտ լոյս», «Արմտան», «Կռունկ ուստի՞ կուգաս», «Տեղեր ուր ես եղեր եմ», բազում «*այլևայլք*», որոնք դեռևս սպասում են իրենց տպագրությանը և իրենց ընթերցողներին:

АРЦРУН АВАГЯН – Свидетель Геноцида армян из Армтана. – В статье освещен константинопольский период жизни Акопа Мндзури (Акопа Темурчяна), классика армянской литературы. В результате геноцида Акопу Мндзури пришлось всю жизнь прожить вдали от родного Армтана, поскольку население его родного села Армтан, а также вся его семья, включая четверых детей, были сосланы и вырезаны. Мндзури, автор нескольких рассказов, опубликованных в константинопольских журналах «Мехеан» и «Остан», погружается в литературно-творческую сферу, становясь одним из пионеров ностальгической литературы и армянской литературы диаспоры. Его главной темой была деревня и крестьянин, родная природа и животный мир, которые, обобщая, конденсировали глубокую тайну труда и созидания как противовеса резне и разрушению. Почти во всех его рассказах он присутствует то как участник разворачивающихся событий, то как очевидец, то как собеседник с созданными им персонажами и читателем.

Его рассказы, кроме своей художественной ценности, являются еще и географией, этнографией, документацией народной жизни, нравов и обычаев, но прежде всего, это документация армянского народа, его свидетельства, литература, при чтении которой возникает вопрос в сознании читателя, кто эти люди и почему они ушли?

Хотя большинство его рассказов занимают до 2-3 страниц, четыре его книги, повести и сочинения, опубликованные в печати целиком, образуют единый роман, который можно назвать легендой о селе Армтан в Западной Армении, обращенной к нынешнему и будущим поколениям, за увековечение Родины и всех мучеников.

Ключевые слова: *«Голубой огонек», Армтан, сельская тема, спектакль «Назар», Мндзури, Геноцид армян*

ARTSRUN AVAGYAN – *The Witness of the Armenian Genocide from Armtan.* – The article highlights the Constantinople period of the life of Hakob Mndzuri (Hakob Temurchyan), the classic author of Armenian literature. As a result of the genocide, Hakob Mndzuri had to live his whole life away from his native Armtan, because the population of his native village Armtan, as well as his entire family, including his four children, were exiled and slaughtered. Mndzuri, the author of several short stories published in Constantinople based “Mehean” and “Ostan” journals, plunges into the literary-creative sphere, becoming one of the pioneers of nostalgic literature and Diaspora Armenian literature. His main theme was the village and the peasant, native nature and animal world, which, by generalizing, condensed the deep mystery of work and creation as a counterweight to slaughter and destruction. In almost all of his stories, he is present, sometimes as a participant in the unfolding events, sometimes as an eyewitness, sometimes as an interlocutor with the characters he created and the reader.

His stories, apart from their artistic values, are also geography, ethnography, documentation of folk life, manners and customs, but above all, it is a documentation of the Armenian people, its testimony, a literature which, when reading, raises the question in the reader’s mind, who are those people and why are they gone?

Although most of his stories consist of up to 2-3 pages, his four books, novels and writings published in the press in their entirety form a single novel, which can be called a legend of the village of Armtan in Western Armenia addressed to the present and future generations, for the perpetuation of the native land and of all the martyrs.

Key words: *“Blue Light”, Armtan, rural theme, “Nazar” theater play, Mndzuri, Armenian Genocide*